

Ս. ԵՐՐՈՐԴ. ՀԱՅՅ. ԵԿԵՂԵՑԻ
ԱՆԴԱՄԱԿԱՆ ՀՆԴՀ. ԺՈՂՈՎ
ՓԵՏՐ. 17, 1980

Ա Տ Ե Խ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ւ

Ս. ԵՐՐՈՐԴ. ՀԱՅՅ. ԵԿԵՂԵՑԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՆԴԱՄԱԿԱՆ ՀՆԴՀ. ԺՈՂՈՎԸ ՄԵԴԻ
ՊԼԵՆԵԳԱԼ ԿԻՐԱԿԻ ՓԵՏՐ. 17, 1980 Կ. Վ. ԺԱՄԸ 4:30-ԻՆ ԵԿԵՂԵՑԻ ՆԵՐՔ-
ՆԱՍՐԱՆԻՆ ՄԷՃ:

ՆԵՐԿԱՅ ՄՐԱՎՈՐ ԱՆԴԱՄԱՆԵՐՈւ ԹԻՒՐ 120 ԷՐ:

ԾՐԱԳԻՐ ԿԱՆՈՆԱԳՐԻ 17-ՐԴ ՅՈՂՈւածին ՀԱՄԱՁԱՅՆ ԺՈՂՈՎԸ ՕՐԻՆԱԼՈՐ ՀԱՄԱՐ-
ՊԼԵԼ ՎԵՐԾ, ԾԽԱԼԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԱՄԵՆԱՎԲԵՍ ՊՐՆ. ՊԱՐԳԵԼ ԽՈՆԴԱԾԵԱՆ ՀՐԱԵՒ-
ՐԵՑ ԱՊԱՀՆՈՐԴԱԿԱՆ ՓՈԽԱՆՈՐԴ ԵԼ ԾՈՒԽԻՍ ՀՈՂԵՒՐՈՐ ՀՈՎԻԼ ՀՈՂՉ. ՎԱԶԳԵՆ Ծ.
ՎՐԴ. ՔԵԶԻՉԵԱՆԸ ՈՐ ԱՂՈՅԹՔՈՎ ԲԱցումը ԿԱՄԱՐԵ ԸՆԴԻԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻՆ:

ՀԱՅՐ ՍՈԼԵՐԻՆ ԱՂՈՅԹՔԻՆ ԵԽԾ, ՊՐՆ. ՊԱՐԳԵԼ ԽՈՆԴԱԾԵԱՆ ՀՐԱԵՒՐԵՑ ԸՆՄՐՈՂԱ-
ԿԱՆ ՑԱՆՑԱԽՈՒՄԸ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ ՊՐՆ. ԹՈՐԳՈՄ ԶԱՎՈՒՆԵԱՆԸ, ՈՐՎԵՍՎԻ
ՕՐՈւան դիւանին թեկնածուները ՆԵՐԿԱՅԱԳՆԷ: ՊՐՆ. ԹՈՐԳՈՄ ԶԱՎՈՒՆԵԱՆ
ԺՈՂՈՎԻՍ յանձնարարեց՝ իբր օրուան դիւանի ԱՄԵՆԱՎԲԵՏ ՊՐՆ. ՀՐԱՆԴ ՍՈԼԻՆ,
ԽՍԿ ԵՐԿՈւ ԱՄԵՆԱՊՐՈՒԹԵԱՆ պաշտօններուն համար, ՊՐՆ. ԺԻՐԱՅՐ ՆԵՐՔԵՑԵԱՆ
ԵԼ ԹՈՐԳՈՄ ԶԱՎՈՒՆԵԱՆ: Ուրիշ թեկնածուներ չ'ըլլալով, օրուան դիւանը
առաջարկուեցաւ ել ԸՆՄՐՈՒԵԳԱԼ ՄԻԱԺԱՅՆՈՒԹԵԱՄԸ:

| | |
|-----------------------|---------------|
| ՊՐՆ. ՀՐԱՆԴ ՍՈԼԻՆ | ԱՄԵՆԱՎԲԵՏ |
| ՊՐՆ. ԺԻՐԱՅՐ ՆԵՐՔԵՑԵԱՆ | ԱՄԵՆԱՊՐՈՒԹԵԱՆ |
| ՊՐՆ. ԹՈՐԳՈՄ ԶԱՎՈՒՆԵԱՆ | ՀԱՅԵՐՔԻՆ |

ԴԻՒԱՆԻ ԱՄԵՆԱՎԲԵՏ ՊՐՆ. ՀՐԱՆԴ ՍՈԼԻՆ ԺՈՂՈՎԻՆ ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ յայտ-
ՆԵԼ ՎԵՐԾ ԹԵԼԱղրեց ՈՐ ԸՆԴՊՈՒՆՈՒԻ, ԾԽԱԼԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԿՈՂՄԵ պատրաս-
տուած օրուան օրակարգը:

ՊՐՆ. ՀԱՅԿ ՄԻՍԱՋԵԱՆ Առաջարկեց ՈՐ ՕՐԱԿԱՐԳԻ ՎՐԱՅ ԸԼԼԱՅ ՀԵԽԵԼԵԱԼ ՓՈ-
ՓՈԽՈՒԹԻՒՆԸ, ԹԻՒ 6 ԵԼ 7 ՆԻՒԹԵՐԸ ՈՐՈՆՔ ԿԱՎՈՒԱԾ ԷԻՆ ԸՆՄՐՈՒԹԵԱՆ, ԾԱՌԱ-
ԻԲՐ ՕՐԱԿԱՐԳԻ ՎԵՐԾ ՆԻՒԹ:

ՊՐՆ. ԳՐԻԳՈՐ ԷԼՄԱՍԵԱՆ ՎԻԽԵԼՈՎ ԱՅՍ Առաջարկը, ԹԵԼԱՂՐԵՑ ՈՐ ԹԻՒ 6 ԵԼ 7
ՆԻՒԹԵՐԸ ՄԵԴԱՎՈԽՈՒԼ ԹԻՒ 9 ՆԻՒԹԻ ՀԵՏ ՈՐ ԾԽԱԼԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ՄԵԴԵԿԱԳԻՐՆ
ԷՐ:

ՊՐՆ. ՄԻՒՐԱՆ ԳՈՒԳՈՒԵԱՆ ՈՒՂԵՑ ՓՈՓՈԽՈՒԹԵԱՆ ԵՆԹԱՐԿԵԼ ՕՐԱԿԱՐԳԻ ՆԻՒԹԵՐՈՒ
ՉԱՐՔԸ ԵԼ ԹԵԼԱՂՐԵՑ ՈՐ ԹԻՒ 6 ԵԼ 7 ՆԻՒԹԵՐԸ ՎԻԾԱԲԱՆՈՒԻՆ ԹԻՒ 11 ՆԻՒԹԻՆ
ՎԵՐԾ:

ծիսկան Խորհուրդի Ատենապետ Պրն. ՆՊարզեւ Խոնամեան այս գանազան թելաղ-
րանք եւ առաջարկներու վրայ ,՝ Այս տարի առաջին անգամ ըլլալով, ժամա-
նակ շահելու նպատակով փոխած ենք օրակարգի նիւթերու շարքը՝ , ըստ:

Զանազան գաղափարներու փոխանակութիւններէ վերջ օրուան օրակարգը
ընդունուեցաւ, ինչպէս որ առաջարկուած էր Պրն. Գրիգոր Էլմասեանի կողմէ
-2եռնբարձ քուէարկութեամբ 80ի դէմ 5-:

Օրուան օրակարգը ընդունուելէ վերջ, անցեալ ընդհանուր ժողովի 25 Փետր.
1979 ատենագրութիւնը կարդացուեցաւ Պրն. Թորգոմ Զապունեանի կողմէ եւ
հետեւեալ սրբագրութիւններէ վերջ ատենագրութիւնը վաւերացուեցաւ միա-
ձայնութեամբ:

Էջ 6, Պրն. Օրջանեանի առաջարկը փոխուի ,՝ առաջարկը դրկուի Կաթողիկոսին,
Առաջնորդարանի խողովակով՝,

Էջ 7, Պրն. Թագւոր Յորեան ներկայացուց հետեւեալ գրաւոր առաջարկը -գրա-
ւոր քառը աւելցուած-

Պրն. Ճոն Գալայնեան թելաղրեց որ ատենագրութիւնը արծանագրուի հայերէն
եւ Անգլերէնով, դիւանս այս թելաղրանքը նկատի առնելով ատենագրութիւնը
արծանագրեց երկու լեզուով:

Պրն. Եղիա Պէրէնիքլեան ,՝ Հնդհանուր ժողովի տեւողութեան, ժամանակ շահե-
լու նպատակով, յարմար կը գտնեմ որ ծիսկան Խորհուրդը ժամ առաջ
ուղղարկէր իր տարեկան տեղեկագիրը՝,

Տօքթ. Շաքէ Թոքմանեան թելաղրեց, ,՝ Ատենագրութեան մէջ շակերտներ գործածուի
անդամի մը թելաղրանքի եւ կամ առաջարկի նախադասութեան:

ՏԵՂԵԿԱԳԻՐՆԵՐՈՒ ՆԵՐԿԱՑԱՑՈՒՄ

Նախքան տեղեկագիրներու ներկայացման, Պրն. Յարութիւն նսայեան առաջար-
կեց որ տեղեկագիրները զատ զատ չի կարդացուի, քանի որ անդամները արդէն
ստացած են, որոշ ժամանակէ մը առաջ: Առաջարկը երկրորդուեցաւ Պրն. Խաչիկ
Գույջումնեանի կողմէ եւ յերոյ առաջարկը որդեգրուեցաւ միաձայնութեամբ:

ՀԱՐՑՈՒՄ ԵՒ ԹԵԼԱԿՐԱՆՔՆԵՐ ՏԵՂԵԿԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ

Ծիսկան Խորհուրդի ՏԵՂԵԿԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ

Պրն. Կարօ Տէյիրմէննեան հարցուց թէ ին՞չ, է 15-25 տարեկան եկեղեցւոյ
անդամի մը սակը. Պրն. Պարզեւ Խոնամեան ,՝ Թևսանողներու սակը 15 Տուլար է՝

Տիկ, Շաբէ Թոգմանեան „ինչ էր, ծխական Խորհուրդի եւ Թեմական Խորհուրդի միջեւ կատարուած, Յուլիս 18, 1979 ժողովին եւ նաեւ Ապրիլ 17, 1979-ին կատարուած բացատրական ժողովին նիւթերը”:

Պրն. Պարզեւ Խոնանեան „Թեմական Խորհուրդի հետ կատարուած ժողովի նիւթերը կը կազմեր, Ս. Երրորդ Եկեղեցւոյ տեղափոխման հարցը եւ յետոյ ունեցանք մասնաւոր ժողով մը, մասնակցութեամբ Եկեղեցւոյս յարակից մարմիններու տաենապետ եւ անդամներու, նախագահութեամբ Թորգոմ Արք. Մանուկեանի: Կակ Ապրիլ 17, 1979-ի բացատրական ժողովը, ծխական Խորհուրդս յարմար դատեց, իր անդամներուն պարզել եւ բացատրութիւններ տալ, զաղութիս մէջ, Արիս նպիսկ. Եիրվանեանի կողմէ տարուած Երկրորդ Եկեղեցիի մը բացման աշխատանքներու տանքներուն մասին, որ չէր վաւերացուած նիւթերքի Առաջնորդարանի կողմէ”:

Պրն. Էտմոն Արթիս կարդաց գրութիւն մը որ սրտի ցաւով կ' արտայայտուէր զաղութիս վերջին մէկ տարուայ Վիճակին, անտեղի բաժննման մասին եւ զաղութիւն ուղղարկուած առանց ստորագրութեան շրջաբերականի մը մասին որ ուղղուած էր ծխական Խորհուրդի Ատենապետ. Պրն. Պարզեւ Խոնանեանի Դիւանի Ատենապետ Պրն. Հրանդ ՍՈՒԻՆ, Պրն. Էտմոն Արթիսի գրութիւնը գտաւ օրակարգի նիւթէն դուրս:

Պրն. Հայկ Միսաքեան „ինչո՞ւ Թեմական պատգամաւորներ չէ ղրկուած Բարիզ Վեհափառ Հայրապետին” հետ տեսակցելու, այլ ղրկուած է ուրիշ անձեր”:

Պրն. Պարզեւ Խոնանեան „Մենք մօտեցանք Եկեղեցւոյս Թեմական Պատգամաւորներու բայց ըլլալ ժամանակի եւ կամ ղրամական պատճառներով անոնք չի կրցան ճամբորդնել յետոյ ծխական Խորհուրդս չի կրնար ստիպել անոնց որ իրենց գրպանէն վճառէն նամբորդութեան ծանքերը, որով ուզեցինք ղրկել կամաւոր անձեր որոնք նոյն ժամանակ կարող պիտի ըլլան ներկայացնել Վեհափառ Հայրապետին Թորոնթօնի իսկական պատկերը: Ինչպէս որ յիշուած է ծխական Խորհուրդի տեղեկագրութեան 12-րդ էջին, այն անձերը որ նամբորդած էին Բարիզ, կը կրնն Եկեղեցւոյս զանազան յարակից մարմիններու իբր ատենապետ եւ կամ դիւանի անդամի հանգամանքը: Յետոյ գիտենք թէ Արիս նպիսկ. Եիրվանեանի տարած աշխատանքներու մասին որոշ տեղեկութիւններ զանազան նամբաներով հասած է Վեհափառ Հայրապետին, մեր 280 աշկերտով Եաբաթօրեայ վարժարանի մը գոյութիւնը Թորոնթոյի մէջ որ կ' ապրի 25 տարիէ ի վեր, յետոյ, մեր մտահոգութիւնը յայտնել եւ լուսաբանութիւն: տալ, տարուած բաժանարար աշխատանքներու մասին”:

Պրն. Ցակոր Երեցեան ժողովիս տուաւ իր տեղեկատուութիւնը որ նամբորդած էր Բարիզ, իբր ծխական Խորհուրդի Փոխ Ատենապետ:

Պրն. Թորգոմ Զապունեան գնահատեց նոր Սերունդ ամսաթերթի եւ հեռածայնի գրքոյ կի յանձնախումբերուն իրենց տարած ժրաջան աշխատանքներուն համար:

Պրն. Ժիրայր Երէցեան „ Լիքանանի աղէտեալներու համար սարգուած մասնաւոր ծաշկերոյթի մասին, ծխական Խորհուրդի տեղեկագրին մէջ չէ յիշուած, թելաղրեց որ այս ելոյթը յիշուի սոյն տեղեկագրութեան մէջ:

Պրն. Ալեքսան Պալթայեան առաջարկեց որ ընդունուի ծխական Խորհուրդի տեղեկագրութիւնը, առաջարկը Երկրորդուեցաւ եւ վաւերացուեցաւ:

Հնտողական Ցանձնախումբի Տեղեկագրութիւն

Պրն. Աչեքսան Պալթայեան Հնտողական Ցանձնախումբի անունով ժողովիս տեղեկացուց թէ Ցանձնախումբս ունեցած է 5 ժողովներ եւ մօտեցուած է 62 տրատու անդամներու, զանազան պաշտօններու համար, ղժբախտաբար կարելի չէր եղած զտնել բաւականաչափ կամաւոր թեկնածուներ որոշ պաշտօններու համար, եւ ժողովիս ներկայացուց,

Ցանձնական Խորհուրդի Թեկնածուներ -Հնտրելի 4 հոգի-

Պրն. Պարզեւ Խոնաճեան
Պրն. Մատաթ Սամուրեան
Պրն. Խուսպար Թօսունեան
Պրն. Հրաչ Շիշմանեան
Տօթ. Շաքէ Թոգմանեան

Հնտրողական Ցանձնախումբի Թեկնածուներ -Հնտրելի 5 հոգի-

Պրն. Պէսի Ամբակումեան
Պրն. Հրաչ Պօյանեան
Պրն. Եղուարդ Տէօվլէթ
Պրն. Սինաս Սէլեան
Պրն. Թորգոմ Զապունեան

Թեմական:

Հաշուեքնիչ Ցանձնախումբի Թեկնածուներ -Հնտրելի 8 հոգի-

Պրն. Կրէկըրի Գասպարեան
Պրն. Լեւոն Եազընեան
Օրդ. Անահիտ Սամուրեան

Թեմական Պատգամաւորներու Թեկնածուներ -Հնտրելի 4 հոգի-

Պրն. Գրիգոր Էլմասեան
Պրն. Պետրոս Գոգորեան
Պրն. Բէնիամին Սամուրեան
Պրն. Հրանդ Սուին
Պրն. Լեւոն Եազընեան
Պրն. Թորգոմ Զապունեան

Ընտրողական: Յանձնախումբի տեղեկագրութենէ վերջ Ատենապետ Պրն. Հրանդ Սուլին ծրագիր Կանոնագրին համաձայն, ժողովին դիմեց եւ երեք անգամ հարցուց թէ ներկան երես կային առաջարկներ ներ թեկնածուներու, վերո-յիշեալ պաշտօններուն համար:

Պրնք. Մինաս Սէլեան, Սամ Օրջանեան-, Կարօ Յովակիմեան եւ Մարտիկ Փափազ-եան թելաղրեցին որ պէտք է նոր թեկնածուներ նշանակուին:

Պրն. Սամ Օրջանեան: ընդունեց իր թեկնածութիւնը դնել ընտրողական Յանձնա-խումբի ցանկին, եւ Պրն. Մուրատ Պահուտեան ընդունեց իր թեկնածութիւնը դնել թեմական Պատգամաւորներու ցանկին մէջ:

Տօրթ. Շաքէ Թոգմանեան իր անունը ետ առաւ ծխական Խորհուրդի թեկնածու-թենէ:

Ուրիշ թեկնածուներ չ' ըլլալուն դիւանս փակեց թեկնածուներու ցանկը:

Հետեւեալ անդամները ստանձնեցին քուէախոյզ յանձնախումբի պաշտօնը:
Տիկ. Սիւզան Մանկոյեան, Պրն. ճռն Յովակիմեան, Պրն. Խաչիկ Գույումնեան
Պրն. Ալեքսան Պալթայեան, Պրն. Մարգիս Տէքըրմէննեան, Պրն. Մարտիկ Փափազեան
եւ Պրն. Նշան Մանճըլըեան:

Ընտրութիւնները կատարուեցաւ, տրատու անդամներու ցանկի համաձայն։ 118
տրատու անդամներու մասնակցութեամբ:

ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ԱՐՁԻՒՆՔ

ԾԽԱԿԱՆ ԽՈՐՃՈՒՐԴ

| | |
|-----------------------|---------|
| Պրն. Մատաթ Մամուրեան | 94 քուէ |
| Պրն. Նուպար Թօսունեան | 98 , , |
| Պրն. Պարզեւ Խոնանեան | 91 , , |
| Պրն. Հրաշ Եիշմանեան | 80 , , |

Ընտրելի 4 անդամ, որո վերոյիշեալ անդամները ընտրուեցան 2 տարուայ համար:

ԸՆՏՐՈՂԱԿԱՆ ՑԱՆՑԱԽՈՒՄԲ

| | |
|-----------------------|----------|
| Պրն. Մինաս Սէլեան | 102 քուէ |
| Պրն. Թորգոմ Զապունեան | 97 , , |
| Պրն. Հրաշ Պօյանեան | 90 , , |
| Պրն. Պէնի Ամբակումեան | 87 , , |
| Պրն. Եղուարդ Տէօվլէթ | 75 , , |
| Պրն. Սամ Օրջանեան | 60 , , |

Առաջին 5 թեկնածուները ընտրուած

ՀԱՇՈՒԵՔՆՆԻՉ ՑԱՆՑԱԽՈՒՄԲ

| | |
|-----------------------|----------|
| Օր. Անահիտ Մամուրեան | 102 քուէ |
| Պրն. Կրէկրի Գասպարեան | 102 , , |
| Պրն. Լեւոն Եազընեան | 102 , , |

ԹԵՍԱԿԱՆ ՊԱՏԳԱՄՄԱՌՈՐԾԵՐ

| | | |
|--------------------------|----|------|
| Պրն. Հրանդ Սուիխ | 98 | Քուէ |
| Պրն. Պետրոս Գոգորեան | 75 | ,, |
| Պրն. Լեւոն Եազըմեան | 69 | ,, |
| Պրն. Թորգոմ Զապունեան | 57 | ,, |
| Պրն. Սուլրատ Պահուտեան | 46 | ,, |
| Պրն. Բէնիամին Մամուրեպին | 42 | ,, |
| Պրն. Գրիգոր Էլմասեան | 40 | ,, |

Առաջին 4 թեկնածուները ընտրուած

Քուէախոյզ Յանձնախումբի քացակայութեան հետեւեալ տեղեկատուութիւններու մասին եղան շինիչ եւ գնահատական արտայայտութիւններ ժողովականներու կողմէ,

ԵԿԵՂԵԳԱՍԷՐ ՏԻԿՆԱՆԳ ՄԻՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Պրն. Մինաս Սէլեան գնահատեց եւ շնորհակալութիւն յայտնեց ՄԱՍ-ի յանձնախումբին, Տիկ. Սիրուն Համամճեանին եւ Տիկ. Մարգինէ Սուիխին:

Տիկ. Սիրուն Համամճեան ժողովիս յիշեցուց Հայ ծերանոցի մը պէտքը:

Պրն. Հայկ Միսարեան եւ Թորգոմ Զապունեան գնահատանքով արտայայտուեցան Տիկնանց Միութեան աշխատանքնե, ուն մասին եւ մասնաւոր շնորհակալութիւն յայտնեցին ատենապետունի Տիկ. Արաք Գարանին:

Պրն. Գրիգոր Էլմասեան ”ինչ է Տիկնանց Կրօնական յանձնախումբին պաշտօնը”, Տիկ. Գարան ”Տէյիրմէնմեան, մեր ժողովներուն, մասնաւոր յատկացուած ժամանակամիջոցի մը, կը խօսի Կրօնական նիւթերու մասին”:

Պրն. Ժիրայր Փէտէրեան թելաղրեց որ Տիկ. Տէյիրմէնմեանի այս զրութիւնները նրատարակուի նոր Սերունդ ամսաթերթի մէջ:

Տիկնանց Միութեան տեղեկագրութիւնը վաւերացուեցաւ գնահատանքով եւ միաձայնութեամբ:

ՀԵԽԱ-Ի ՏԵՂԵԿԱԳՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Պրն. Պետրոս Գոգորեան գնահատանքի խօսքեր ըսաւ ՀԵԽԱ-ի վարչութեան իրենց տարած աշխատանքներուն համար:

Պրն. Եանան Տէյիրմէնմեան ”ՀԵԽԱ-ի աւանդական ՌիԴիթ-ի նաշը որ Զ տարիէ ի վեր չէ կազմակերպուած, կը թելաղրեմ որ այս տարի կազմակերպուի”

Պրն. Պերճ Պասմանեան ,՝ զանազան պատճառներով չի կրցանք կազմակերպել, բայց այս տարի պատրաստ ենք կազմակերպելու ,՝ :

Պրն. Հրանդ Սուլին շնորհաւորեց Հեծեան-ի անդամները որտ նք ծննդեան Գիշերը այցելած էին գաղութէս 20 ընտանիքներու եւ թելաղրեց որ յառաջիկային շատ աւելի քաջալերուի:

Պրն. Պերճ Պասմանեան խնդրեց ծնողներէ որ քաջալերէն Հեծեան-ի աշխատանքները: Հեծեան-ն ունի 45 անդամներ:

Հեծեան-ի տեղեկագիրը վաւերացուեցաւ միաժայնութեամբ:

Ս. Սահակ Եւ Ս. Մեսրոպ Ազգ. Վարժարանի Տեղեկագիր

Պրն. Սամ Օրջանեան ,՝ նոր սկսող աշակերտի մը համար, դասարաններու մէջ գործածուած գիրքերը բաւական դժուար է կը թելաղրեմ որ աւելի դիւրին բառեր գործածուի:

Գերշ. Վազգէն ծ. Վրդ. Քէշիշեան ,՝ Այս գիրքերը մանկավարժական եւ Ամերիկեան ստանտարտի վրայ պատրաստուած են եւ նիւ նորքի Առաջնորդարանի կողմէ ընդունուած ,՝ :

Պրն. Գրիգոր Էլմասեան գնահատեց Ս. Սահակ են Ս. Մեսրոպ Ազգ. Վարժարանի խնամակալ մարմնի եւ ուսուցչաց կազմի աշխատանքները:

Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ Ազգ. Վարժարանը ունի 250 աշակերտ:

Պրն. Մինաս Սէլեան ,՝ Յ տարի առաջ Հայաստան աշակերտ կը դրկուէր, ինչո՞ւ համար այս վերջին տարիներուն չի դրկուիր ,՝ :

Պրն. Հրաչ Շիշմանեան ,՝ դրամական դժուարութիւններու տակ կարելի չէ իրականացնել այս գաղափարը ,՝ :

Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ Ազգ. Վարժարանի տեղեկագիրը վաւերացուեցաւ միաժայնութեամբ:

Ս. Եղողորդ. Հայզ. Եկեղեցւոյ Դպրաց Դասի Տեղեկագիրը:

Պրն. Պետրոս Գոգորեան գնահատանքով արտայայտուեցաւ Նրտսեր երգչախումբին եւ իրենց վարիչ Տիկ. Լենա Պէյլէրեանի եւ ապա Դպրաց Դասի տեղեկագիրը վաւերացուեցաւ միաժայնութեամբ:

Ս. Եղողորդ. Հայզ. Եկեղեցւոյ Տարեց Քաղաքացիներու Տեղեկագիր

Պրն. Հայկ Միսարեան յիշեցուց թէ վարչութեան անդամներու անունները չէ յիշուած տեղեկագրին մէջ եւ թելաղրեց որ յառաջիկայ տարւոյ տեղեկագրին մէջ յիշուի: Եւ ապա Տարեց քաղաքացիներու տեղեկագիրը վաւերացուեցաւ միաժայնութեամբ:

Կիրակնօրեալ Վարժարանի Տեղեկագիր

Պրն. Սամ. Օրջանեան „՝ Կիրակնօրեայ Վարժարանի աշակերտութեան թիւը շատ քիչ է եւ դասերն ալ գոհացուցիչ ըլլալէ շատ հեռու”:

Հոգշ. Վազգէն ծ. Վրդ. Քէշիշեան „Ամէն Կիրակի առաջու 16-20 աշակերտ կանոնաւորապէս կը մասնակցին դասերըու, եթէ այս թիւը քիչ է, որով սխալը մեր մէջը կը փնտոնենք, պէտք է հաւատանք մեր եկեղեցին եւ իտէալին, կ'ուզեմ որ ամէն ծնողը կանոնաւորապէս բերէ իր զաւակը Եկեղեցի:

Տիկին. Արաքս Գարան գնահատանքով արտայայտուեցաւ Կիրակնօրեայ Վարժարանի պատասխանատու Օր. Ալիս Գույումնեանի իր տարած կամաւոր եւ սիրայօժար աշխատանքին համար:

Կիրակնօրեայ վարժարանի տեղեկագիրը վաւերացուեցաւ միաձայնութեամբ:

Կրտսեր Հեծեկա-ի եւ Թեմական Պատգամաւորներու տեղեկագիրները վաւերացուեցաւ միաձայնութեամբ:

Հաշուեքնիշ Ցանձնախումբի Տեղեկագիր

Պրն. Օհան Գույումնեան թելաղրեց որ 10,000.00 Տուարի մը չափ գումար մը պէտք չէ որ երեւի հասարակ առանց տոկոսի- հաշիւի մը մէջ:

Հաշուեքնիշ Ցանձնախումբի տեղեկագիրը վաւերացուեցաւ միաձայնութեամբ:

Ցանձապահի Տեղեկագիր

Պրն. Ցանձապահ Նսայեան „՝ Պապայեանի կտակը գանձուած է թէ ոչ, եթէ ոչ երբ կարելի պիտի ըլլայ գանձել”:

Դիւանիս Ատենապետ Պրն. Հրանդ Սուին, իբր Պապայեան ֆառւնտէյշըն Դրասթ-ի մէկ անդամ պատասխանեց „՝ Պապայեանի կտակը տակաւին, Պապայեան ֆառւնտէյշընի Սէյվինկ Սէրթիքիքէյթի ճեւով, Ս. Երրորդ. Եկեղեցւոյ անուան տակ, Եկեղեցւոյ տեղափոխման կամ շինութեան ծախսելու նպատակով պահուած է - գումարը 878,958.45 Տոլար-:

Պրն. Պետրոս Գոգորեան „՝ Հաշուեկշիոի մէջ, Եկեղեցւոյ շինութեան նորոգութեան ծախսը շատ քիչ կ'երեւի կը թելաղրեմ որ այս գումարը աւելնայ, որովհետեւ թէ Եկեղեցւոյ սրահը եւ թէ Խոհանոցը խնամքի եւ նորոգութեան պէտքը ունի” : Նկատի առնելով Պրն. Պետրոս Գոգորեանի թելաղրանը, Պրն. Միսաքեան առաջարկեց որ -էջ 85 նախատեսուած Պիւտմէի Ելքի սիւնակի վրայ, 8,000.00 Տոլարի զանազան ծախսերը ըլլայ 500.00 Տոլար իսկ Եկեղեցւոյ շինութեան նորոգութեան ծախսերը բարձրանայ 5,500.00 Տոլարի, առաջարկը երկրորդուեցաւ. Պրն. Նուրհան Գարանի կողմէ եւ ապա ծեռնքարձ քուէարկութեամբ վաւերացուեցաւ:

Պրն. Հայկ Միսաքեան Հաշուեկշիռի մէջ Ս. Խաչ Դպրեվանքի համար կ' երեւի
8, 342. 78 Տուլար, այս գումարին տոկոսը ինչ եղած է՝ :

Հոգշ. Վազգէն ծ. Վրդ. Քէշիշեան այս գումարը կը կենայ Զէքինկ ըքառւնթի
մէջ որով տոկոս չի աշխատիր եւ ծխական Խորհուրդը միշտ պատրաստ է այս
գումարը տեղափոխելու ֆափաքուած եւ կամ հրահանգուած տեղը՝ :

Պրն. Օհան Գույումմու իբր հաշուեքննիչ յանձնախումբի անդամ թելաղրեց
որ արատու անդամներէ զանձուելի գումարները արժանագրուի իբր զանձելի
հաշիւ սիւնակին մէջ -ըքառւնթ բիսիվըլ-:

Գանձապահի տեղեկագիրն ալ վաւերացուեցաւ միաժայնութեամբ:

Անդամական ժողովը փակուեցաւ ժամը 11-ին Հոգշ. Հայր Սուրբին շինիչ եւ
բարեմաղթանքի պատգամով եւ աղօթքով:

Ի Դիմաց
Ս. Երբորդ. Հայր. Եկեղեցւոյ
Տարեկան ծխական ժողովի
Դիւնաի
ՆԱԽԱԳԱՀ

Հազգէն ծ. Վրդ. Քէշիշեան
Հոգեւոր Հովիւ եւ Առաջնորդի
Փոխանորդ Գանատայի

Ատենապետ

Ատենադպիրներ

ԺԵՐԵ ԵՐԱԿԱՆ

Հրանդ Սուրին

Թորգոմ Զապունեան

Ժիրայր Երեցեան